ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ_____

«___» _____ 20__ թ.

ԿՈՂՄԵՐ՝

ԲԱՆԿ-ԳՈՐԾԱԿԱԼ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

ՀԱՃԱԽՈՐԴ-ՊՐԻՆՑԻՊԱԼ՝

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Բանկ-Գործակալը պարտավորվում է վարձատրությամբ Հաճախորդ-Պրինցիպալի գրավոր հանձնարարությամբ (այսուհետ՝ Հանձնարարական) Հաճախորդ-Պրինցիպալի անունից և նրա հաշվին կատարել հետևյալ գործողությունները.

1.1.1արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,

1.1.2արժեթղթերով գործարքների կատարում (այսուհետ միասին՝ Բրոքերային ծառայություններ):

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Բանկ-Գործակալը պարտավոր է.**

2.1.1Հաճախորդ-Պրինցիպալի կողմից տրված հանձնարարությունները կատարել նրա համար հնարավորինս լավագույն պայմաններով՝ համաձայն տրված Հանձնարարականների,

2.1.2 Հաճախորդ-Պրինցիպալին փոխանցել նրա կողմից տրված Հանձնարարականների կատարման արդյունքում ստացված եկամուտը, ինչպես նաև Հաճախորդ-Պրինցիպալին պատկանող դրամական միջոցները և արժեթղթերը,

2.1.3 Հաճախորդ-Պրինցիպալի համար վարել առանձին բանկային (ՀՀ դրամով և/կամ այլ արժույթով) և արժեթղթերի հաշվառման հաշիվ (այսուհետ՝ Արժեթղթերի/դեպո հաշիվ),

2.1.4Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականով տրված գործարքի չկատարման կամ մասնակի կատարման դեպքում համապատասխան չափով վերադարձնել Հաճախորդ-Պրինցիպալի դրամական միջոցները և/կամ արժեթղթերը,

2.1.5Հաճախորդ-Պրինցիպալի ներկայացրած Հանձնարարականի կատարման անհնարինության դեպքում անհապաղ տեղեկացնել Հաճախորդ-Պրինցիպալին,

2.1.6 մինչև Պայմանագրի կնքումը Հաճախորդ-Պրինցիպալին ծանոթացնել «Արժեթղթերի շուկայում Բրոքերային ծառայությունների մատուցման» ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և Բանկի կողմից իրականացվող գործառնությունների սակագներին (հաշվարկադրամարկղային գործառնություններ)՝ (այսուհետ՝Սակագին),

2.1.7 Ընթացակարգի համաձայն ամսական հաշվետվությունները, ինչպես նաև Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարք կնքելուց հետո մինչև գործարքի կնքմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվությունը տրամադրել Հաճախորդ-Պրինցիպալին հետևյալ եղանակով՝

- ☐ Պայմանագրի 5-րդ բաժնում նշված էլեկտրոնային հասցեին,
- ☐ Բանկ-Գործակալի տարածքում՝ թղթային եղանակով:

2.1.8 պահպանել Պայմանագրի և Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականների հետ կապված, ինչպես նաև Բրոքերային ծառայությունների մատուցման արդյունքում Բանկ-Գործակալին հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը,

2.1.9Հաճախորդ-Պրինցիպալի դրամական միջոցները և Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և դրանց արդյունքում ստացված արժեթղթերը հաշվառել Պայմանագրին և Բանկ-Գործակալի ու Հաճախորդ-Պրինցիպալի միջև կնքված արժեթղթերի պահառության ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան,

2.1.10 Բանկ-Գործակալի մոտ վարվող Հաճախորդ-Պրինցիպալի հաշվին առկա դրամական միջոցները օգտագործել բացառապես Պայմանագրի շրջանակներում Բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի և Սակագներով նախատեսված վճարների գանձման նպատակով:

2.2 Հաճախորդ-Պրինցիպալը պարտավոր է.

2.2.1արժեթղթերի վաճառքի Հանձնարարական ներկայացնելիս Բանկ-Գործակալի մոտ իր Արժեթղթերի/դեպո հաշվին ապահովել վաճառվող արժեթղթերի ծավալը,

2.2.2 արժեթղթերի գնման Հանձնարարական ներկայացնելիս Բանկ-Գործակալի մոտ առկա իր բանկային (ՀՀ դրամով և/կամ այլ արժույթով) հաշվին ապահովել արժեթղթի գնման համար անհրաժեշտ գումարը,

2.2.3Բանկ-Գործակալին վճարել մատուցված Բրոքերային ծառայությունների դիմաց՝ համաձայն Սակագների,

2.2.4Հատուցել իր կողմից տրված Հանձնարարականների կատարման ժամանակ Բանկ-Գործակալի կրած ծախսերը՝ Բանկ-Գործակալի ներկայացրած հիմնավորումների հիման վրա,

2.2.5 չհրաժարվել Բանկ-Գործակալի կողմից իր Հանձնարարականի հիման վրա կատարված գործարքից,

2.2.6պահպանել Պայմանագրի և իր Հանձնարարականների հետ կապված տեղեկությունների գաղտնիությունը,

2.2.7նախքան Բանկ-Գործակալի համապատասխան ծառայությունից օգտվելը ծանոթանալ տվյալ ժամանակահատվածում գործող Սակագներին և Ընթացակարգին, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում՝ www.acba.am:

2.3 Բանկ-Գործակալն իրավունք ունի.

2.3.1մերժել Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականի ընդունումը կամ հրաժարվել դրա կատարումից, եթե.

2.3.1.1. ներկայացվել է Հաճախորդ-Պրինցիպալին կամ նրա իրավասու ներկայացուցչին չպատկանող անձը հաստատող փաստաթուղթ կամ Հաճախորդ-Պրինցիպալն իրավասու չէ ներկայացնել այդպիսի Հանձնարարական,

2.3.1.2. ներկայացվել է ոչ պատշաճ (օրինակ՝ ջնջումներով) լրացված Հանձնարարական,

2.3.1.3. Հաճախորդ-Պրինցիպալի բանկային կամ Արժեթղթերի/դեպո հաշվին բավարար միջոցներ առկա չեն:

2.3.2Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականների կատարման նպատակով իր հայեցողությամբ ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից,

2.3.3միակողմանիորեն փոփոխել Սակագները և Ընթացակարգի պայմանները, որոնք ծանուցված կհամարվեն և ուժի մեջ կմտնեն Բանկի ինտերնետային կայքում ՝ www.acba.am, հրապարակվելու պահից:

2.4 Հաճախորդ-Պրինցիպալն իրավունք ունի.

2.4.1Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Բանկ-Գործակալին ներկայացնել Հանձնարարականներ,

2.4.2Կասեցնել, չեղարկել կամ փոփոխել իր կողմից Բանկ-Գործակալին տրված Հանձնարարականը՝ Հաճախորդ-Պրինցիպալի կողմից ներակայացված Հանձնարարականի կասեցման/չեղարկման/փոփոխման դիմումի համաձայն, քանի դեռ Բանկ-Գործակալը չի կատարել Հանձնարականից բխող այնպիսի գործողություններ, որոնցից հրաժարվելը արդեն անհարիր է:

3. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ և ԲԱՆԿԻ ԿՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով նախատեսված Բրոքերային ծառայությունների մատուցման դիմաց Հաճախորդ-Պրինցիպալը վարձատրում է Բանկ-Գործակալին՝ համաձայն Սակագների:

3.2 Սակագներով նախատեսված վճարները, ծախսերի հատուցումները և Բանկ-Գործակալի նկատմամբ ցանկացած այլ դրամային պարտավորություններ, որոնք կապված են Բրոքերային ծառայությունների մատուցման հետ Հանձնարարականի կատարումից հետո, ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը Բանկ-Գործակալն անակցեպտ կարգով գանձում է Հաճախորդ-Պրինցիպալի բոլոր բանկային հաշիվներից, առաջնահերթ՝ ՀՀ դրամով բանկային հաշիվներից, ապա՝ արտարժութային, որի դեպքում արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է Բանկ-Գործակալի մոտ սահմանված փոխարժեքով:

3.3 Մինչև նոր սակագների ուժի մեջ մտնելը, Բանկ-Գործակալի և Հաճախորդ-Պրինցիպալի միջև փոխադարձ հաշվարկները կատարվում են նախկին սակագներին համապատասխան:

3.4 Հաճախորդ-Պրինցիպալը փոխհատուցում է նաև Բանկ-Գործակալի կատարած այն ծախսերը և այլ վճարները, որոնք անմիջականորեն կապված են Հաճախորդ-Պրինցիպալի Հանձնարարականների կատարման հետ:

3.5 Պայմանագիրը Հաճախորդ-Պրինցիպալի կողմից միակողմանիորեն լուծելու դեպքում Հաճախորդ-Պրինցիպալը պարտավոր է փոխհատուցել իրեն պատկանող արժեթղթերի և/կամ դրամական միջոցների վերադարձման գծով Բանկ-Գործակալի կատարած ծախսերը:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անժամկետ:

4.2 Պայմանագրի շրջանակներում արժեթղթերի արտաբորսային առուվաճառքի պայմանագիրը կնքվում է Պայմանագրի Հավելված 1-ի համապատասխան:

4.3 Պայմանագրով, Սակագներով և Ընթացակարգով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

4.5 Պայմանագիրը Հաճախորդ-Պրինցիպալի կողմից կարող է միակողմանիորեն լուծվել՝ այդ մասին Բանկ-Գործակալին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագրի լուծման պահին Հաճախորդ-Պրինցիպալի կողմից Պայմանագրում նշված հաշիվներին առկա են լինում արժեթղթերը և դրամական միջոցները, ինչպես նաև դրանցից ստացված եկամուտը:

4.6 Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Պայմանագրի շրջանակներում Բանկ-Գործակալի և Հաճախորդ-Պրինցիպալի միջև Հանձնարարականների, փաստաթղթերի, հաշվետվությունների և ցանկացած այլ տիպի տեղեկատվության փոխանակման, առաքման և փոխանցման հուսալի միջոց են համարվում կողմերի հասցեները, որոնք սահմանվում են Պայմանագրի 5-րդ բաժնում:

4.8 Բանկ-Գործակալի կողմից Բրոքերային ծառայությունների մատուցման ընթացքում Կողմերի միջև առաջացող վեճերը և տարաձայնությունները լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում, վեճերն ու տարաձայնությունները ենթակա են կարգավորման ՀՀ գործող օրենսդրության սահմանված կարգով:

4.9 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

ֆիզ.անձ հաճախորդ-պրինցիպալի համար

ԲԱՆԿ-ԳՈՐԾԱԿԱԼ

անվանում

հասցե

AGCAAM22

SWIFT հասցե

Brokerage@acba.am

էլեկտրոնային հասցե

31 88 83

հեռախոսահամար

www.acba.am

կայք

Dealing ACBA/ACBA/CBANet

CBANet հասցե

պաշտոն

անուն, ազգանուն

հիմք

ստորագրություն

Կ.Տ.

ՀԱՃԱԽՈՐԴ-ՊՐԻՆՑԻՊԱԼ

անուն,ազգանուն,հայրանուն

անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

հասցե

էլեկտրոնային հասցե

հեռախոսահամար

բանկային հաշիվ

արժեթղթերի հաշիվ

դեպո հաշիվ

ստորագրություն

ի.անձ հաճախորդ-պրինցիպալի համար

ՀԱՃԱԽՈՐԴ-ՊՐԻՆՑԻՊԱԼ

անվանում

հասցե

էլեկտրոնային հասցե

հեռախոսահամար

բանկային հաշիվ

արժեթղթերի հաշիվ

դեպո հաշիվ

պաշտոն

անուն, ազգանուն

հիմք

ստորագրություն

Կ.Տ.

ԱՁ հաճախորդ-պրինցիպալի համար

ՀԱՃԱԽՈՐԴ-ՊՐԻՆՑԻՊԱԼ

ԱՁ –ի անվանում

ՀՎՀՀ

անձը հաստատող փաստաթղթի տվյալներ

հասցե

էլեկտրոնային հասցե

հեռախոսահամար

բանկային հաշիվ

արժեթղթերի հաշիվ

դեպո հաշիվ

պաշտոն

անուն, ազգանուն

հիմք

ստորագրություն

Կ.Տ.

_____ թ.-ին կնքված թիվ ____
բրոքերային ծառայությունների
մատուցման պայմանագրի
Հավելված 1

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ _____

_____ *«____» _____ 20__ թ.*

ԿՈՂՄԵՐ՝
ՎԱՃԱՌՈՂ՝
ԳՆՈՐԴ՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 . Սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) Վաճառողը պարտավորվում է Գնորդին որպես սեփականություն հանձնել արժեթղթեր, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել և վճարել Պայմանագրի 1.2 կետում նշված արժեթղթերի (այսուհետ՝ Արժեթուղթ) համար:

1.2 . Պայմանագրի իմաստով Արժեթուղթ է համարվում՝

Արժեթղթի տեսակ	Արժեթ. թողարկ. սերիա և համար	Արժեթղթի քանակ/ ծավալ	Եկամտաբերություն	Գնման գինը

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԱՐԺԵԹՂԹԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Պայմանագրի գինը Կողմերի համաձայնությամբ կազմում է _____ (_____)_____:

2.2. Գնորդը պարտավորվում է Պայմանագրի կնքման պահից _____ ընթացքում Արժեթղթի դիմաց Վաճառողին վճարել Պայմանագրի 2.1 կետում նշված գումարը Վաճառողի Պայմանագրի 5-րդ բաժնում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

2.3. Վաճառողը պարտավորվում է Պայմանագրի կնքման պահից _____ ընթացքում Արժեթուղթը փոխանցել Գնորդի՝ Պայմանագրի 5-րդ բաժնում նշված դեպո/արժեթղթի հաշվին:

3. ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Պայմանագրի 2.2. և 2.3. կետերով նախատեսված ժամկետները խախտելու դեպքում խախտող կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տույժ՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար գործարքի ընդհանուր գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

3.2. Պայմանագրից հրաժարվելու դեպքում, հրաժարվող կողմը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, մյուս կողմին վճարում է տուգանք՝ գործարքի ընդհանուր գումարի 5 (հինգ) տոկոսի չափով:

3.3. Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կողմերը ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Վաճառողը հավաստիացնում է, որ Պայմանագրի կնքման պահին Արժեթուղթն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (արգելանքի տակ չէ, գրավադրված չէ, չի տիրապետվում երրորդ անձի կողմից և ազատ է երրորդ անձանց որևէ պահանջներից, դրանց վրա բռնագանձում տարածված չէ):

4.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Արժեթղթի նկատմամբ սեփականության իրավունքը Կենտրոնական դեպոզիտարիայում կամ այլ պահառուի մոտ գրանցելու պահից:

4.3. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ:

4.4. Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերն ու տարաձայնությունները ենթակա են կարգավորման ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ֆիզ.անձ գնորդի համար

ԳՆՈՐԴ
անուն,ազգանուն,հայրանուն
անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս գնորդի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.

Ֆիզ.անձ վաճառողի համար

ՎԱՃԱՌՈՂ
անուն,ազգանուն,հայրանուն
անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս վաճառողի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.

Ի.անձ գնորդի համար

ԳՆՈՐԴ
անվանումը
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս գնորդի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.

Ի.անձ վաճառողի համար

ՎԱՃԱՌՈՂ
անվանումը
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս վաճառողի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.

ԱՀ գնորդի համար

ԳՆՈՐԴ
ԱՀ-Ի անվանումը
ՀՎՀՀ
անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս գնորդի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.

ԱՀ վաճառողի համար

ՎԱՃԱՌՈՂ
ԱՀ-Ի անվանումը
ՀՎՀՀ
անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
հասցե
բանկային հաշիվ
արժեթղթերի հաշիվ
դեպո հաշիվ
Գործակալ, ով հանդես է գալիս վաճառողի անունից և հաշվին
էլեկտրոնային հասցե 31 88 83
հեռախոսահամար www.acba.am
կայք **Dealing ACBA/ACBA/CBANet**
CBANet հասցե
պաշտոն
անուն, ազգանուն
հիմք
ստորագրություն
Կ.Տ.